

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/1

17 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Վեգարթ» ՍՊԸ 21.08.2014 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 24.02.2014 թ-ի թիվ 4 որոշման դեմ:

«Վեգարթ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության (այսուհետ՝ Վարչական մարմին) պետի 24.02.2014 թ-ի թիվ 4 որոշման համաձայն (այսուհետ՝ վարչական ակտ) «Վեգարթ» ՍՊԸ-ից որոշվել է գանձել 8.599.146 դրամ, որպես պարտավորության գումար:

Բողոքաբերը գտնում է, որ վարչական ակտն անհիմն է, ընդունվել է ՀՀ օրենսդրության խախտումներով և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Համաձայն վարչական ակտի՝ դրա ընդունման համար հիմք է հանդիսացել վարչական մարմնի կողմից 17.02.2014 թ-ի դրությամբ հաշվարկված «Վեգարթ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների մեծությունը, որը նրա կողմից վճարված չի եղել:

Վարչական մարմնի կողմից հաշվարկված վճարման ենթակա գումարը 17.02.2014 թ-ի դրությամբ կազմել է 8.599.146 դրամ, որի հետ «Վեգարթ» ՍՊԸ-ն համաձայն չէ: Մասնավորապես, համաձայն վարչական մարմնի հաշվարկի 2013 թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում հաշվարկված և չվճարված եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմել է 1.002.359 դրամ, սակայն ըստ «Վեգարթ» ՍՊԸ-ի հաշվարկի պետք է կազմեր 874.792 դրամ:

«Վեգարթ» ՍՊԸ-ի հաշվարկի համար հիմք է հանդիսացել հետևյալը.

«Վեգարթ» ՍՊԸ-ն 2013 թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների համար հաշվարկել և իր հաշվետվություններում արտացոլել է եկամտային հարկ ընդամենը 2.556.207 դրամ, որից մարվել է 1.874.126 դրամը: Նշված վճարումների արդյունքում 01.01.2014 թ-ի դրությամբ եկամտային հարկի գծով չվճարված գումարը կազմել է 682.081 դրամ, իսկ հաշվարկված տույժը 192.711 դրամ, որոնց գումարը կազմում է 874.792 դրամ:

Վարույթի ընթացքում «Վեգարթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները վարչական մարմնի կողմից չեն ընդունվել: Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ և տվյալ դեպքում նույնիսկ հաշվարկի ճշտմանն ուղղված գործողություն տեղի չի ունեցել:

Վարույթն իրականացնող մարմինը խախտել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օտենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 55-րդ հոդվածի 4-րդ մասի ե/ կետի, 56-րդ և 57-րդ հոդվածների դրույթները:

Ելնելով վերոհիշյալից բողոքաբերը խնդրում է ամբողջությամբ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 24.02.2014 թ-ի թիվ 4 որոշումը:

Բողոքաբերն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ «Վեգարթ» ՍՊԸ-ն սույն թվականի մայիսի 15-ին կատարելով հարկային ապառքի գծով իր ունեցած պարտավորությունը և հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածը, 16.06.2014 թ-ին դիմել է Վարչական մարմին տույժերի գծով ունեցած պարտավորությունը մասնակի մարումներով վեց ամսյա գրաֆիկով մարելու ժամանակացույց կազմելու խնդրանքով: Սակայն վարչական մարմինն իր 17.07.2014 թ-ի թիվ 11-4/9735-14 գրությամբ մերժել է ժամանակացույցի կազմման առաջարկը պատճառաբանելով, որ դրա համար իրավական հիմքեր չկան:

Սույն թվականի հուլիսի 25-ին «Վեգարթ» ՍՊԸ-ն նույն պահանջով կրկին անգամ դիմել է Վարչական մարմին՝ նշելով ընկերության գործունեությանն ակնհայտորեն վտանգող բավարար հիմքեր, սակայն Վարչական մարմինն իր 01.08.2014 թ-ի թիվ 11-4/11052-14 գրությամբ կրկին անգամ մերժել է ժամանակացույց կազմելու խնդրանքը:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 57-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները «Վեգարթ» ՍՊԸ-ն բողոքարկում է նաև Վարչական մարմնի գործողությունները կապված ժամանակացույցի տրամադրումը մերժելու հետ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետը, քննարկելով «Վեգարթ» ՍՊԸ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 17.02.2014 թ-ի դրությամբ «Վեգարթ» ՍՊԸ-ի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 8.599.146 դրամ, որից ԱԱՀ 6138825 դրամ (2011 թ-ի չորրորդ եռամսյակից 2013 թ-ի չորրորդ եռամսյակ), շահութահարկ 918.257 դրամ (2012 թ-ի տարեկան հաշվարկ), եկամտահարկ 418.469 դրամ (2011 թ-ի ապրիլից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների հաշվարկ), եկամտային հարկ 1.002.359 դրամ (2013 թ-ի հունվարից դեկտեմբեր ամիսների հաշվարկ), 08.02.2008 թ-ի թիվ 1032718 ստուգման ակտի գումար՝ 20 դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճար 121.216 դրամ (2011 թ-ի դեկտեմբերից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների հաշվետվություն): Նշված պարտավորությունները ենթակա են գանձման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետը 24.02.2014 թ-ին ընդունել է թիվ 4 որոշումը «Վեգարթ» ՍՊԸ-ից 8.599.146 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 24.02.2014 թ-ի թիվ 4 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները հաշվարկվել են հիմք ընդունելով «Վեգարթ» ՍՊԸ կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված տվյալները (պարտավորությունները), ինչպես նաև դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերը:

Ինչ վերաբերվում է «Վեգարթ» ՍՊԸ բողոքին՝ կապված պարտքի աստիճանական մարման ժամանակացույց չկնքելու հետ, ապա նշվեց հետևյալը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 24.02.2014 թ-ին ընդունել է թիվ 4 որոշման ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել եզրակացության, որ ըստ էության, «Վեգարթ» ՍՊԸ-ն չի հանդիսանում բարեխիղճ հարկ վճարող: Այդ մասին է վկայում այն փաստը, որ նշված որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունների մի մասն առաջացել են դեռևս 2011-2012 թթ-ից: Բացի այդ, «Վեգարթ» ՍՊԸ կողմից հարկային պարտավորությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու հետևանքով ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 2012 թ-ին հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան «Վեգարթ» ՍՊԸ-ից պետական բյուջեի օգտին 11.774.063 դրամ բռնագանձելու պահանջի մասին: Արդյունքում, ՀՀ վարչական դատարանի 26.07.2013 թ-ի վճռի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության հայցը մասնակի բավարարվել է:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչությունը, օգտվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքից 13.12.2013 թ-ին և 07.05.2014 թ-ին «Վեգարթ» ՍՊԸ-ի չկատարչված հարկային պարտավորությունների չափով, համապատասխանաբար՝ 3.169.711 դրամի և 4.529.859 դրամի, արգելանք է դրել ընկերության գույքի վրա:

Վերը նշված փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ «Վեգարթ» ՍՊԸ կողմից պարբերաբար խախտվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի դ) կետով նախատեսված պահանջը՝ օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև դրանց կանխավճարային մուծումները ժամանակին վճարելու պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Վեգարթ» ՍՊԸ 16.07.2014 թ-ի դիմումին չեն կցվել բավարար հիմքեր այն մասին, որ արգելանքի կիրառումն ակնհայտորեն վտանգում է իր գործունեությունը, նշված դիմումով բերված միջնորդությունը՝ պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց կնքելու վերաբերյալ, մերժվել է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 24.02.2014 թ-ի թիվ 4 որոշումը թողնել անփոփոխ, իսկ «Վեգարթ» ՍՊԸ բողոքը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**